«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**ԹԵՄԱ** ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԻՆ ԲՆՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ

ԱՌԱՐԿԱ ՆԶՊ

ՀԵՂԻՆԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ՄԱՐԶ ՇԻՐԱԿ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ <<ԵՐԱԶԳԱՎՈՐՍԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------2

Գլուխ1. Դեռահասության տարիքի ընդհանուր բնութագրերը----------3

1.1Դեռահասների ուսումնական գործունեությունը, չափահասների և հասակակիցների հետ շփման առանձնահատկությունները----------3

Գլուխ2. Դեռահասության տարիքին բնորոշ հիմնախնդիրները, դրանց լուծման ուղիները----------6

2.1Արդի պայմաններում դեռահասության տարիքին բնորոշ հիմնախնդիրները----------6

2.2 Դեռահասության տարիքի արդի հիմնախնդիրների լուծման մեթոդները----------10

2.3Հետազոտական աշխատանքի վերլուծություն----------13

Եզրակացություն----------18

Օգտագործված գրականության ցանկ----------19

# Ներածություն

**Հետազոտության արդիականությունը:** Ժամանակի ընթացքում փոփոխությունների են ենթարկվում դեռահասների արժեքային համակարգը, պատկերացումները և դիրքորոշումները, դաստիարակության մեթոդները: Փոխվում է գրեթե ամեն ինչ՝ կյանքի ռիթմը, տեմպը, ինֆորմացիոն դաշտը, ընթացքը, հաղորդակցման ձևերը և այլն: Դեռահասները նաև հեռացել են իրենց ազգային ավանդույթներից, սովորույթներից և մշակույթից:

**Հետազոտական աշխատանքի նպատակն է՝** ուսումնասիրել դեռահասների մանկավարժական և հոգեբանական առանձնահատկությունները, արդի պայմաններում դեռահասների տարիքին բնորոշ հիմնախնդիրները և լուծման ուղիները:

**Հետազոտական աշխատանքի խնդիրներն են:**

1.Տեսական վերլուծության միջոցով բացահայտել դեռահասության տարիքում դեռահասի մոտ առաջացած սեռական հասունացման խնդիրները:

2.ՈՒսումնասիրել արդի պայմաններում դեռահասության տարիքին բնորոշ հիմնախնդիրները:

3.Բացահայտել դեռահասության տարիքի արդի հիմնախնդիրների լուծման ուղիները:

4.Մշակել հատուկ անկետա ընկերության սուբյեկտիվ գնահատման և արտահայտման ձևերի վերաբերյալ:

Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային 20 էջ:

# ԳԼՈՒԽ 1.ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹՅԱԳԻՐԸ

## 1.1 Դեռահասների ուսումնական գործունեությունը, չափահասների և հասակակիցների հետ շփման առանձնահատկությունները

Դեռահասների մեջ ուսման նկատմամաբ դրական վերաբերմունք ձևավորելու գործում առավել էական նշանակություն ունի, ուսումնական նյութի գիտական-գաղափարական բովանդակալիությունը: Շատ կարևոր է զինել դեռահասներին ուսումնական աշխատանքի ռացիոնալ միջոցներով, որը հաջողության հասնելու նախադրյալ է: Էքսկուրսիաները, դրական աշխատանքի բազմազան տեսակները, զանազան խմբակները նույնպես օգնում են դեռահասների մեջ ձևավորելու դրական վերաբերմունք ուսման նկատմամբ: [2 էջ175-176]

Դպրոցը և ուսուցումը դեռահասների կյանքում մեծ տեղ են գրավում: Սակայն տարբեր երեխաների համար դրանց նշանակությունը նույնը չէ, թեև բոլորն էլ գիտակցում են ուսման կարևորությունն ու անհրաժեշտությունը: Շատերի համար դպրոցը ավելի գրավիչ է դառնում, քանի որ այնտեղ նրանք հասակակիցների հետ լայնորեն շփվելու հնարավորություն ունեն: Բայց այս հանգամանքը հաճախ բացասաբար է անդրադառնում բուն ուսման վրա: Դեռահասի համար 45 րոպե տևողությամբ դասը ոչ միայն ուսուցման, այլ համադասարանցիների և ուսուցչի հետ շփվելու իրադրություն է, որը հագեցված է շատ նշանակալից արարքներով, գնահատականներով ու ապրումներով: Տարբեր հանձնարարություններ կատարելիս երեխաները շարունակում են շփվել: Միայն դասանյութը խիստ գրավիչ կերպով բացատրելն ու դասի ընթացքում աշխատանքը կազմակերպելիս ուսուցչի դրսևորած վարպետությունը կարող են ստիպել կրտսեր դեռահասին մոռանալ ընկերների ներկայությունը: Նրանց հետ շփվելը ուշադրությունը շեղում է դասից, ընդ որում դեռահասը ունենում է նաև անձնական հետաքրքրություններ և սիրած զբաղմունքներ: Դպրոցում ստացած գիտելիքների հետ մրցակցության մեջ են մտնում նաև այն բազմազան ու հետաքրքրական տեղեկությունները, որ դեռահասը քաղում է ամենատարբեր աղբյուրներից:

ՈՒսումնական առարկայի նկատմամբ կրտսեր դեռահասի վերաբերմունքը ամենից առաջ կախված է ուսուցչի նկատմամբ նրա վերաբերմունքից, ինչպես նաև ստացած գնահատականներից: Շատերին դուր է գալիս այն գործը, որը կատարելը հեշտ է և հաջողություն է բերում: Սրա հետ մեկտեղ ավելի են սկսում գրավել այնպիսի նյութեր, որոնք մտավոր ակտիվություն և ինքնուրույն գործողություններ են պահանջում և ընդլայնում են մտահորիզոնը: ՈՒսումնական տարբեր առարկաներ «հետաքրքիր» կամ «անհետաքրքիր» համարելը մեծ մասամբ կախված է դասավանդման որակից և դեռահասի անձնական հետաքրքրություններից, իսկ դրանք որպես «պետքական» կամ «ոչ պետքական» բնորոշելը կապված է մասնագիտական մտադրությունների ձևավորման հետ: Յուրաքանչյուր նոր առարկա, դասընթաց կամ ծավալուն բաժին շարժում է դեռահասների հետաքրքրությունը: ՈՒսուցչից է կախված այդ հետաքրքրության պահպանումն ու զարգացումը: Մեծ չափով նրա վարպետությամբ է կանխորոշվում՝ արդյո՞ք անչափահասը ակտիվորեն կմասնակցի դասին, թե կզբաղվի սեփական գործերով, բարեխղճորեն կպատրաստի տնային հանձնարարությունները, թե ծուլություն կանի, կձգտի հասկանալ ու իմանալ նյութը, թե կբավարարվի նվազագույնով՝միայն ցանկալի թվանշանը ստանալու համար: Նոր ուսուցչի հայտնվելու կապակցությամբ այս ամենը երևան է գալիս առավել ցայտունորեն, ծույլ ու երեքներով սովորող աշակերտը կարճ ժամանակում կարող է ակտիվ, հետաքրքրասեր և լավ սովորող դառնալ: Կամ, ընդհակառակը, դեռահասը կարող է կորցնել հետաքրքրությունը տվյալ առարկայի նկատմամբ, դասի ընթացքում լսելու և տանը աշխատելու ցանկությունը: ՈՒսուցչի փոխվելու հետևանքով երբեմն փոխվում է ողջ դասարանի վարքագծի ու աշխատանքի բնույթը: «Դժվար» դասարանից այն կարող է վերածվել «նորմալ» դասարանի կամ ընդհակառակը:

Անձի ձևավորման համար լավագույն պայմաններն են ստեղծվում այն դեպքում, երբ գիտելիքների ձեռք բերումը դեռահասի համար սուբյեկտիվորեն անհրաժեշտ է դառնում ինչպես ներկայումս, այնպես էլ ապագային նախապատրաստելու համար, երբ պարապմունքների տարբեր տեսակները հագեցվում են իմացական և արդյունավետ, ստեղծագործական բնույթի խնդիրներով, որի շնորհիվ նպաստում են ինքնակրթությանն ու ինքնակատարելագործմանը: Հենց դեռահասության շրջանում են առաջ գալիս ուսուցման այն նոր դրդապատճառները, որոնք կապված են

կենսական հեռանկարների ու իդեալի, մասնագիտական մտադրությունների և ինքնագիտակցության ձևավորման հետ: Դեռահասը սկսում է գիտակցել իր ձեռք բերած գիտելիքների զարգացման մակարդակի թերությունները: Նրա համար իմացական ակտիվության աղբյուրներ են դառնում իր անձից ունեցած դժգոհությունը և մտադրությունը իրագործելու ձգտումը: Իր ինքնուրույն պարապմունքների ընթացքում նա առաջ է քաշում հեռավոր ու մոտակա նպատակներ, որոնք կազմակերպում և ուղղվածություն են հաղորդում նրա գործունեությանը: ՈՒսուցումը անձնային իմաստ է ստանում և ձևափոխվում է ինքնակրթության: ՈՒսումնական գործունեության այդ որակապես նոր ու բարձրագույն տեսակի ծագումն ու զարգացումը տեղի են ունենում դեռահասության շրջանում:[4 էջ 170-175,]

Դեռահասության փուլի կարևորագույնն ու առանձնահատուկ տեղը պայմանավորված է նրանով, որ չափահասի և երեխայի միջև հաստատված և մանկության տարիքին հատուկ հարաբերությունները հենց այստեղ են փոխարինվում այնպիսի փոխհարաբերություններով, որոնք հատուկ են չափահաս մարդկանց շփման պրոցեսներին:

Այդ անցումըիրենից ներկայացնում է դեռահասի և չափահասի սոցիալական փոխներգործունեությունների նոր եղանակների կազմավորման պրոցես: Շփման հին եղանակները աստիճանաբար արտամղվում ենՆորորի կողմից, բայց շարունակում են նաև գոյակցել:Սրա հետևանքով մեծ դժվարություններ են առաջանում և՛ մեծերի, և՛ դեռահասների համար: Դեռահասի վարքը, նրա ինքնագնահատումն ու իր նկատմամբ մեծերի կողմից ցույց տրվող վերաբերմունքի գնահատումը միջնորդավորող նոր կանոնները դառնում են ձևավորող բարոյական աշխարհայացքի հիմքը:

Փոխհարաբերությունների նոր ձևերին անցնելն բարեհաջող ընթացք կարող է ունենալ, եթե չափահասն ինքն է նախաձեռնություն հանդես բերում, կամ դեռահասի պահանջները հաշվի առնելով, փոխում է իր վերաբերմունքը: Որպեսզի սա տեղի ունենա, չափահասը պետք է հրաժարվի դեռահասին երեխա համարելուց: սակայն մի շարք էական հանգամանքներ նպաստում են նախկին հարաբերությունների հարատևմանը: Դրանցից են.

1. Դեռահասի հասարակական դիրքի անփոփոխությունը
2. Դեռահասը նյութական բացարձակ կախվածության մեջ է գտնվում իր ծնողներից
3. Չափահասները պահպանում են երեխային ուղղություն տալու և վերահսկելու սովորությունը, որը դժվար է վերացնելնույնիսկ դրա անհրաժշտությունը գիտակցելու դեպքում,
4. Դեռահասի արտաքինն ու վարքագիծը, հատկապես առաջին շրջանում, պահպանում են մանկական գծեր, և նա դեռևս չի կարողանում ինքնուրույնաբար գործեն:[5]

Հասակակիցների հետ դեռահասի հարաբերությունները ավելի բարդ, բազմազան ու բովանդակալից են, քան կրտսեր դպրոցականի հարաբերությունները: Հենց դեռահասության շրջանում են փնավորվում այն բազմատեսակ և ըստ մտերմության աստիճանի միմյանցից զգալիորեն տարբերվող հարաբերությունները, որոնք հստակորեն տարբերակվում են դեռահասի կողմից: Նա ունենում է պարզապես ընկերներ, մտերիմ ընկերներ և անձնական բարեկամ: Սրանց հետ ունեցած կապերը աստիճանաբար դուրս են գալիս դպրոցի և ուսումնական գործունեության շրջանակներից ընդգրկում են նոր հետաքրքրություններ ու զբաղմունքներ: Շփումը դեռահասի համար աստիճանաբար դառնում է կյանքի ինքնուրույն և շատ կարևոր վոլորտ: Այն հագեցված է լինում տարբեր իրադարձություններով ու դեպքերով, պայքարով ու բախումներով, հաղթանակներով ու պարտություններով, հայտնագործություններով ու հուսախաբություններով, դառնություններով և ուրախություններով, որոնք և ընդհանուր առմամբ կազմում են դետահասի կյանքը [4 էջ139-141]

# ԳԼՈՒԽ 2. ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԻՆ ԲՆՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

## 2.1Արդի պայմաններում դեռահասության տարիքին բնորոշ հիմնախնդիրները

Դեռահասության շրջանը մարդու կյանքում ամենադժվարին հակասական և բեկումնային իրադարձությունների ժամանակահատվածն է: Տարիքային այս փուլում տեղի են ունենում խոր փոփոխություններ, որոնք էական ազդեցություն են ունենում երեխայի անձի ձևավորման ու զարգացման վրա: Այս շրջանը բնորոշվուն է ֆիզիկական, հոգեկան և սոցիալական զարգացման բազմաթիվ առանձնահատկություններով:

Դեռահասի անձի զարգացման հիմնախնդիրը ոչ միայն հոգեբանամանկավարժական, այլև սոցիալական կարևորագույն խնդիր է: Հենց այս տարիքում է մարդն անցնում իր զարգացման կարևորագույն ուղին՝ հաղթահարելով ներքին և արտաքին բազմաթիվ կոնֆլիկտներ, ձեռք բերելով անձնավորություն լինելու զգացողություն:

Հոգեբանական գրականության ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնել հաղորդակցման երեք կարևոր տեսանկյուն՝ հաղորդակցային, պերցեպտիվ և ինտերակտիվ: Կարելի է եզրակացնել, որ հաղորդակցումը գործնականում հետևյալ երեք բաղադրիչների համակցումն է: Դեռահասի համար հաղորդակցումը տեղեկատվություն ստանալու ճանապարհն է: Այն և գործունեության առանձնահատուկ ձև է և միևնույն ժամանակ միջանձնային հարաբերությունների հաստատման միջոց: [6 էջ62]

Միջանձնային հաղորդակցումը դեռահասի առաջատար գործունեությունն է, քանի որ այդտեղ է իրականանում ինքնագիտակցության ձեռքբերումը, սեփական ես-ի գիտակցումը, իր մասին պատկերացումների ձևավորումը: Միջանձնային հարաբերությունները չափազանց կարևոր են դեռահասի կենսագործունեության համար: Այդ առումով առավել էական նշանակություն ունի շփումը հասակակիցների հետ: Այս շրջանում շփման գործընթացի մոտիվացիայի ոլորտում տեղի են ունենում

էական փոփոխություններ: Կարծես մեծերի հետ հարաբերությունները կորցնում են իրենց հրատապությունը և առավել կարևորություն է ստանում շփումը հասակակիցների հետ: [8էջ346]

ՈՒսումնասիրությունները ցույց են տվել, որ հաճախ որքան ցածր է լինում կարգավիճակը դպրոցի կոլեկտիվում, այնքան այն բարձր է լինում տարերային խմբում: Հասակակիցների հետ հաղորդակցումը դառնում է նրա համար ամենահաճելի զբաղմունքը: Դեռահասները օրվա մեծ մասն անցկացնուն են միասին, որն էլ հաճախ ծնողների հետ բախումների պատճառ է դառնում: Այս իրավիճակում ուսումնական գործընթացը մղվում է երկրորդ պլան: Միմյանց հետ շփման կարևորությունն այն է, որ դեռահասները շփվում են իրավահավասարության սկզբունքով, ինչը մեծերի հետ շփման ընթացքում գրեթե անհնարին է: [10էջ 218]

Ըստ Ա. Մուդրիկի, որը երկար ժամանակ ուսումնասիրել է անձի սոցիալականացման հիմնախնդիրները, դեռահասի շփման բովանդակությունը ներառում է հետևյալ բաղադրիչները.

1.կյանքի բարոյագաղափարական խնդիրը,

2.կյանքի իրադրային կողմը,

3.կյանքի հուզական կողմը,

4.կենցաղի առարկայական կողմը: [9էջ 175]

Անձի զարգացման դժվարությունները այս տարիքային փուլում ուղեկցվում են միայնության զգացումով: Հետևաբար դեռահասի մեջ անհագ ցանկություն է առաջանում անընդհատ լինելու ընկերների հետ՝ հույս ունենալով գտնել այն, ինչ նրանց արգելում են ծնողները՝ անմիջականություն, կարևորության զգացողություն և ձանձրույթը փարատելու տարբեր միջոցներ: Դեռահասի համար կարևոր է ոչ միայն լինել ընկերների շրջապատում, այլև զբաղեցնել ցանկալի կարգավիճակ: Ոմանց համար կարևոր է անպայման իշխող դիրք գրավել խմբում, մյուսներին բավարարում է պարզապես ընկերների կողմից սիրված և ընդունված լինելու զգացողությունը: Դեռահասի շփման բուն գործընթացը հետզհետե դառնում է առավել խոր և

բովանդակալից, ընդլայնվում է նրանց հոգևոր և մտավոր հաղորդակցումը, առաջանում են հուզական հաղորդակցման տարբեր ձևեր՝ ընկերություն, սեր:[10]

Չի խրախուսվում դաստիարակության ավտորիտար, գերհոգատար կամ խիստ վերահսկող դիրքորոշումը, քանի որ դրանցից յուրաքանչյուրը կարող է բացասական ազդեցություն ունենալ հետագայում: Ավտորիտար դիրքորոշումը հանգեցնում է կամ չափազանց ամոթխածության, անհամարձակության կամ դաժան բնավորության ձեռքբերմանը: Խիստ հոգատար և վերահսկող վերաբերմունքի դեպքում երեխան դառնում է անվճռական, ինքնուրույնությունից զուրկ, անհամարձակ: ՈՒստի ամենաշահեկան դիրքորոշումը մեծահասակի կողմից ընկերոջ կարգավիչակի ձեռքբերումն է, որը և կօգնի երեխային հաղթահարելու դեռահասության ճգնաժամի դժվարությունները և բարենպաստ հարաբերությունները հաստատելու վերջինիս հետ:[6 էջ79]

Դեռահասության խնդիրների պատճառները բազմազան են: Դրանցից մեկն ինքնահաստատվելու և տարբերվելու ցանկությունն է՝ զուգորդված համընդհանուր նորմերի և օրենքների դեմ բողոքով: Բողոքը դեռահասներին միավորում է մի շարք ոչ ֆորմալ խմբերի կամ շարժումների մեջ, որոնք տարբերվում են իրենց գաղափարախոսությամբ և խորհրդանշաններով: Ներկայումս կան շատ տարբեր խմբեր և դեռահասների շարժումներ: Բողոքը դեռահասներին դրդում է տնից փախուստի դիմելու, թափառաշրջիկության: Որոշ դեռահասներ ինչ-որ ռոմանտիկա են գտնում գիշերելու տեղ փնտրելու, սնունդ հայթայթելու և նմանատիպ այլ արկածների մեջ:

Առանձնահատուկ դժվար իրավիճակներում դեռահասները կարող են սուիցիդալ վարք դրսևորել, մահվան մասին մտքեր, սպառնալիքներ արտահայտել, ինքնասպանության փորձ կատարել: Սակայն դեռահասների միայն 10%-ն է իսկապես ցանկանում մահանալ, մնացած մասը սուիցիդալ վարքը միայն «օգնության ճիչ է»:[2]

## 2.2 Դեռահասության տարիքի արդի հիմնախնդիրների լուծման մեթոդները

Դեռահաս լինելը շատ դժվար է: Էներգիայով լի դեռահասը, ունենալով անկախության մեծ պահանջմունք, անցնում է ծանր փորձությունների միջով՝ փնտրելով իր համար ճանապարհ նոր աշխարհում: Իսկ եթե հաշվի առնենք, որ հարթ ճանապարհներ չեն լինում, ապա կարելի է հեշտությամբ հասկանալ այն սիրալիրությունը և տագնապը, որոնք առաջացնում են դեռահասները ծնողների մոտ: Մեծահասակները պետք է նպաստավոր պայմաններ ստեղծեն դեռահասների զարգացման համար. Վերջիններս պետք է անել այնքան հոգատարությամբ, ինչպես մանկության տարիներին, երբ երեխայի ճանապարհից հեռացնում ենք սուր առարկաներ, որոնք վտանգ են ստեղծում նրա համար: Պետք է հարգել դեռահասների արժեքները, օգնել նրանց զարգացնել ճիշտ ինքնագնահատականի զգացում և տալ նրանց անհրաժեշտ օգտակար խորհուրդներ:

Ըստ Բայարդների, պետք է երեխային թույլ տալ պատասխանատվություն կրել սեփական կյանքի համար: Շատ հաճախ ծնողները թույլ չեն տալիս իրենց երեխաներին ապրել ինքնուրույն, որն էլ հետագայում բազում խնդիրների կարող է հանգեցնել: Ծնողներին հաճախ անհանգստացնում են այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ երեխան ուշ է քնում, հեռուստացույց շատ է դիտում, կռվում է քրոջ կամ եղբոր հետ, ցանկանում է մենակ մնալ և այլն: Ծնողների դերը այստեղ կայանում է նրանում, որ օգնեն երեխային գիտակցել պատասխանատվություն սեփական արարքների համար:

Ծնողները պետք է ժամանակ գտնեն և հետաքրքրվեն այն ամենով, ինչով զբաղվում է իրենց երեխան: Ծնողները պետք է խրախուսեն, եթե դեռահասը գիտակցել է և անկեղծորեն փորձել է ուղղել իր սխալները:

Ինչպես հայտնի է, դեռահասության շրջանում մեծ փոփոխություններ են տեղի ունենում երեխայի օրգանիզմում, որը կապված է էներգիայի հզոր պայթյունի հետ: Այդ էներգիայի հետ պետք է վարվել շատ զգուշորեն, այն պահանջում է արտահայտման հուսալի, խելամիտ և առողջ ճանապարհներ: Շատ օգտակար է սպորտով զբաղվելը, ֆիզիկական վարժություններ անելը, որոնք էլ իրենց հերթին

խթան կհանդիսանան մտավոր աշխատանքի համար: Դեռահասի վիճակը կարելի է համեմատել ձիարշավի պատրաստվող անհանգիստ, ուժով լի ձիերի հետ, նաև նյարդային թխթխկացնող կապիտանի, ով անհամբերությամբ սպասում է, թե երբ են վերջապես բացվելու դարպասները: Նրանք լի են ոգևորությամբ և, անկասկած, ուզում են հասնել հաղթանակի արշավում:

Շատ հաճախ մեծահասակները չեն հասկանում դեռահասների անհամբերությունը և նույնիսկ չեն էլ ուզում փորձել հասկանալ նրանց բարդացնելով վերջիններիս կյանքը: Դեռահասները սովորական մարդիկ են, ովքեր փորձում են սովորել ապրել մեծահասակների աշխարհում և ամենևին էլ վստահ չեն իրենց ուժերում: Միայն այն ժամանակ, երբ յուրաքանչյուր մարդու կվերաբերվեն ինչպես անհատականության և կսովորեն գնահատել նրանց, հնարավոր կլինեն իրական փոփոխություններ: Ծնողները հենց իրենք են հանդիսանում իրենց երեխաների համար գիտելիքների և բարության աղբյուր: Որպեսզի ծնող-երեխա փոխհարաբերություններում դրական փոփոխություններ լինի պետք է.

- Ծնողները հստակ շարադրեն իրենց երեխաներին սեփական վախերը և անհանգստությունները, որպեսզի երեխաները կարողանան հասկանալ իրենց:
- Դեռահասները պետք է անկեղծորեն ասեն այն մասին, թե ինչ է տեղի ունենում իրենց հետ, և փորձեն անել այնպես, որպեսզի իրենց հասկանան: Նրանք նույնպես պետք է ասեն իրենց վախերի մասին և իմանան, որ իրենց լսում են առանց քննադատության:
- Ծնողը պետք է ցույց տան իրենց պատրաստակամությունը՝ լսել և հասկանալ իրենց դեռահաս երեխաներին: Հասկանալ, ամենևին էլ չի նշանակում ներել: Այն միայն ստեղծում է ամուր հիմք, որի վրա կարելի է կառուցել հետագա հարաբերությունները:
- Դեռահասները պետք է հասկանան ծնողներին, որ կարիք ունեն այն բանի, որ նրանք լսեն և փորձեն հասկանալ իրենց, բայց խորհուրդներ չտան մինչև դեռահասը ինքը չի խնդրել այդ մասին:

- Ծնողները պետք է հասկանան, որ դեռահասը ամենևին էլ չպետք է հետևի իրենց խորհուրդներին: Միայն այս պարագայում հնարավոր կլինի երկու իրավահավասար մարդկանց միջև երկխոսություն, իսկ հետագայում էլ նոր վարքի ձևերի զարգացում:[3]

## 2.3 Հետազոտական աշխատանքի վերլուծություն

Հետազոտությունն անցկացվել է Շիրակի մարզի Երազգավորս գյուղի միջնակարգ դպրոցում: Հետազոտությանը մասնակցել են 11-14 տարեկան 69 դեռահաս, որից 35-ը տղա է, 34՝ աղջիկ:

Արդի պայմաններում դեռահասության տարիքին բնորոշ հիմնախնդիրներն ուսումնասիրելու նպատակով հետազոտական աշխատանք ենք իրականացրել՝ կիրառելով անկետավորման մեթոդը: Փորձել ենք պարզել ժամանակակից պայմաններում դեռահասների միջանձնային փոխհարաբերությունների դրվածքը՝ շեշտը դնելով ընկերության մասին դեռահասների պատկերացումների վրա:

Անկետավորման համար կազմել ենք հարցաթերթիկ՝ կազմված 8 հարցից: (Նմուշը տե՛ս հավելվածում): Հարցումը եղել է անանուն:

Հարցաթերթի առաջին հարցին՝

Ի՞նչ է ընկերությունը, հարցվողներից 39-ը պատասխանել է, որ փոխադարձ հարգանք և վստահություն է, որը կազմում է հարցվողների 57%-ը, իսկ 30-ը պատասխանել է՝ ինչ-որ մեկի կողքին ապահով զգալն է, որը կազմում է հարցվողների 43%-ը: (Տե՛ս գծապատկեր 1):




**Գծապատկեր1**

Այստեղից կարող ենք եզրակացնել, որ ընկերության մեջ դեռահասները այսօր էլ կարևորում են բարոյական որակները:

Հարցաթերթի երկրորդ հարցին՝

Ի՞նչն է կարևոր ընկերության մեջ, հարցվողներից 17-ը պատասխանել է՝ ազնվությունը, որը կազմում է հարցվողների 25%-ը, 29-ը պատասխանել է՝

գաղտնապահությունը, որը կազմում է հարցվողների 42%-ը, 23-ը պատասխանել է՝ անշահախնդրությունը, որը կազմում է հարցվողների 33%-ը: (Տե՛ս գծապատկեր 2)




**Գծապատկեր 2**

Այստեղից ևս կարող ենք եզրակացնել, որ դեռահասների համար ընկերության մեջ կարևորը անձնային որակներն են ու բնավորությունը:

Հարցաթերթի երրորդ հարցին՝

Ինչի՞ եք պատրաստ հանուն ընկերության, հարցվողներից 18-ը պատասխանել է, որ պատրաստ եմ այն ամենին, ինչին նա պատրաստ է ինձ համար, որը կազմում է հարցվողների 26%-ը, 51-ը պատասխանել է, որ հանուն ընկերության պատրաստ եմ ամեն ինչի, որը կազմում է հարցվողների 74%-ը: (Տե՛ս գծապատկեր 3):




**Գծապատկեր 3**

Այստեղից կարող ենք եզրակացնել, որ դեռահասների մեծ մասը պատրաստ է անմնացորդ նվիրվել, ընկերոջ կողքին լինել միշտ: Սակայն ոչ բոլոր դեռահասներն են, որ կարող են նվիրվել անշահախնդիր: Դեռահասների մի մասն էլ թերահավատորեն է վերաբերվում ընկերներին: Այստեղից էլ կարող ենք եզրակացնել, որ այս դեռահասներն ունեցել են անտարբեր, անհավատարիմ ընկերներ, որի հետևանքով էլ նրանք չեն կարող ամբողջությամբ նվիրվել ընկերներին:

Հարցաթերթի չորրորդ հարցին՝

Ինչպիսի՞ն եք պատկերացնում ձեր ընկերոջը, հարցվողներից 23-ը պատասխանել է, որ իմ ընկերը պետք է լինի իմ կողքին ոչ միայն ուրախության պահերին, այլ նաև այն ժամանակ, երբ ես տխուր կլինեմ և միայնակ, որը կազմում է հարցվողների 33%-ը, 15-ը պատասխանել է, որ կուզենայի ունենալ այնպիսի ընկեր, ով անշահախնդիր կլիներ իմ հանդեպ, որը կազմում է հարցվողների 22%-ը, 31-ը պատասխանել է՝ կուզենայի, որ իմ ընկերը լիներ գեղեցիկ և հմայիչ, որը կազմում է հարցվողների 45%-ը:(Տե՛ս գծապատկեր 4):




**Գծապատկեր 4**

Այստեղից կարող ենք եզրակացնել, որ դեռահասների գերակշռող մասի համար կարևորը ընկերոջ արտաքին տեսքն է:

Հարցաթերթի հինգերորդ հարցին՝

Ի՞նչը չեք ների ձեր ընկերոջը, հարցվողներից 49-ը պատասխանել է՝ ստախոսությունը, որը կազմում է հարցվողների 71%-ը, 20-ը պատասխանել է՝

նախանձը, որը կազմում է հարցվողների 29%-ը: (Տե՛ս գծապատկեր5)




**Գծապատկեր 5**

Այստեղից եզրակացնում ենք, որ դեռահասները չեն ընդունում հատկապես ստախոսությունը, որը, ցավոք, գերակշռում է դեռահասների մոտ:

Հարցաթերթի վեցերորդ հարցին՝

Ինչո՞վ են իրարից տարբերվում սերը և ընկերությունը, հարցվողներից 43-ը պատասխանել է, որ ընկերոջ հետ կարող ես խոսել այնպիսի թեմաներից, որոնց մասին չես կարող խոսել սիրած էակի հետ, որը կազմում է հարցվողների 62%-ը, 19-ը պատասխանել է՝ սերը կարող ես զգալ միայն մեկ մարդու նկատմամբ, իսկ ընկերություն անել՝ շատերի հետ, որը կազմում է հարցվողների28%-ը, 7-ը պատասխանել է՝ ընկերը փոխարինելի է, իսկ սիրած էակը՝ անփոխարինելի, որը կազմում է հարցվողների 10%-ը: (Տե՛ս գծապատկեր 6):




**Գծապատկեր6 6**

Այստեղից կարող ենք եզրակացնել, որ դեռահասների համար ամենակարևորը ընկերությունն է: Նրանք այս տարիքում հիմնականում ուզում են շփվել միայն իրենց ընկերների հետ:

Հարցաթերթի յոթերորդ հարցին՝

Ձեր կարծիքով ո՞րն է առաջնայինը, հարցվողներից 35-ը պատասխանել է՝ սերը, որը կազմում է հարցվողների 51%-ը, 34-ը պատասխանել է՝ ընկերությունը, որը կազմում է հարցվողների 49%-ը: (Տե՛ս գծապատկեր 7)




**Գծապատկեր 7**

Պարզվեց, որ կան սեռային տարբերություններ սիրո և ընկերության ընկալման վերաբերյալ: Տղաները ընկերությունը համարում են սրբություն, իսկ աղջիկները ավելի հուզականորեն են ներկայացնում ընկերությունը:

Տղաները շատ բարձր են գնահատում ընկերությունը և մեծ կարևորություն են տալիս դրան:

Հարցաթերթի ութերորդ հարցին՝

Գերադասում եք ազատ ժամանակը անցկացնել, հարցվողներից 21-ը պատասխանել է՝ ընկերների հետ, որը կազմում է հարցվողների 30%-ը, 30-ը պատասխանել է՝ համակարգչի առջև, որը կազմում է հարցվողների 43%-ը, 18-ը պատասխանել է՝զբաղվել ընթերցանությամբ, որը կազմում է հարցվողների 26%-ը: (Տե՛ս գծապատկեր8):




**Գծապատկեր 8**

Այստեղից եզրակացնում ենք, որ դեռահասների մեծ մասի մոտ առկա է համակարգչային կախվածությունը, որն էլ մեծ ազդեցություն է թողնում երեխայի զարգացման, վարքի ձևավորման և դրանք գնահատող արժեքային ցուցանիշների վրա:

## Եզրակացություն

Այսպիսով, ուսումնասիրելով դեռահասության տարիքին բնորոշ ճգնաժամերը և դրանց հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները՝ կարող ենք ասել, որ.

- Դեռահասության տարիքում կտրուկ մեծանում է հետաքրքրությունը սեփական արտաքինի նկատմամբ, ձևավորվում է նոր ֆիզիկական «ես»:
- Դեռահասության տարիքում սեռական նույնականացումը հասնում է նոր՝ ավելի բարձր մակարդակի:
- Դեռահասության տարիքում հուզական հարաբերությունների կարևորագույն տեսակներն են սերն ու ընկերությունը:
- Դեռահասության տարիքը օրգանիզմի բուռն աճի ու զարգացման շրջան է, երբ տեղի է ունենում մարմնի ինտենսիվ աճ, կատարելագործվում է մկանային ապարատը:
- Դեռահասության տարիքը համարվում է ճգնաժամային, քանի որ այս տարիքում են ձևավորվում մարդու աշխարհընկալման, աշխարհայացքի և առհասարակ առաջնային արժեքների համակարգը:
- Դեռահասության շրջանում մեծ փոփոխություններ են տեղի ունենում դեռահասի օրգանիզմում, որն էլ կապված է էներգիայի հզոր պայթյունի հետ:

## Օգտագործված գրականության ցանկ


1.Կարապետյան Ա. «Տարիքային ֆիզիոլոգիա», Երևան 1981: 80էջ

2.Կրուտեցկի Վ. Ա. «Մանկավարժական հոգեբանության հիմունքները» Երևան 1976թ. 428 էջ

3.Շախրերյան Ա. «Տարիքային ֆիզիոլոգիա», Երևան 1981թ. էջ 80

4.Պետրովսկի Ա. Վ. «Տարիքային և մանկավարժական հոգեբանություն», «Լույս» հրատարակչություն, Երևան-9, Կիրովի 19ա: 397էջ

5. Батуев А. С. и др. Уеловек. Основы физиологии и психологии, Москва, 2000. стр. 45

6. Волков Б. С., указ. Соч. 306 стр. с. 79.

7. Волков Б. С. Психология юнности и молодости, М., 2006, 256 стр. 62.

8. (Реана А. А. под. ред.) Психология человека от рождения до смерти М. 2002, 656, стр. с. 346

9. Мудрик А. В. Социализация человека, М. 2006, 736 стр. с175

10.Немов Р. С. Психология в 3 книгах, кн. 2М., 2007, 640 стр. с175


## Էլեկտրոնային աղբյուրներ


1. https://168.am/2018/03/21/923754.html ( առցանց հասանելի է 15. 02.2020թ. 21:00)

2. https://www.mapa.am/dastiarakutyany-hatuk-khndirner/( առցանց հասանելի է 13. 03. 2020թ. 15:40)

3. http:// blog.mediamall.am/?id=104833( առցանց հասանելի է 25. 03. 2020թ. 14:00)